ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2522-Ա « 15 » մայիսի 2026 թ.

ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ 11.96ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Լուսինե Առուստամյանի դիմումը՝ Գայի պողոտայի հ.19 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 11.96քմ մակերեսով տարածքի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.27052024-01-0114 վկայական/ համար կնքված վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

Գայի պողոտայի հ.19 հասցեում գտնվող շենքը՝ սեփականության իրավունքով պատկանում է Երևան համայնքին /անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.04.2009թ. հ.2466743 վկայական/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածով, հաշվի առնելով 2024 թվականի մայիսի 15-ի ոչ բնակելի տարածքի վարձակալության հ.2979 պայմանագիրը, «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից 2026 թվականի ապրիլի 29-ին ներկայացված անշարժ գույքի վարձակալության արժեքի գնահատման հ.FCG0426-0023 հաշվետվությունը.

1.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Լուսինե Առուստամյանի հետ կնքել համաձայնագիր՝ Գայի պողոտայի հ.19 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 11.96քմ մակերեսով տարածքի համար 2024 թվականի մայիսի 15-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության հ.2979 պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին, ներառելով հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) պայմանագրի 3-րդ կետի 3.1 ենթակետը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2028 թվականի հունիսի 1-ը:».

2) պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետում՝ «60000 (վաթսուն հազար)» բառերը փոխարինել «66000 (վաթսունվեց հազար)» բառերով.

3) համաձայնագրով սահմանված փոփոխությունը կիրառվում է կողմերի միջև 2026 թվականի մայիսի 28-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 1-ին կետով նշված համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պետական գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են Լուսինե Առուստամյանի կողմից:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246